Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 21.10.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Աթանեսյանի
մասնակցությամբ անդամներ՝ Ա.Դունամալյանի
Պ. Թադևոսյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քաղաքացիական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են քաղաքացիական դատավարություն բաժնի 8-րդ, 10-րդ, 15-րդ, 25-րդ, 29-րդ հարցերը:

Քաղաքացիական դատավարություն բաժին

Հարց 8

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցն արտատպված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 6-րդ մասից, իսկ ճիշտ պատասխանը նույն հոդվածի նշված մասի շարունակությունն է:

Հարց 10

Հավակնորդը նշված հարցի վերաբերյալ բողոքի երկրորդ մասում կարողացել է հիմնավորել նաև իր ընտրած տարբերակի սխալ չլինելը, հետևաբար գնահատականն ենթակա է բարձրացման:

Հարց 15

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասը սպառիչ թվարկում է այն անձանց շրջանակը, ովքեր որպես վկա ցուցմունք տալուց որոշակի հարցերին չպատասխանելու իրավունք ունեն, իսկ ինչ վերաբերում է Հավակնորդի այն հիմնավորմանը, որ որոշակի հարցերին չպատասխանելու իրավունքից օգտվում են նաև լրագրողները, ապա հարցադրման որևէ պատասխանում, այդ թվում Հավակնորդի ընտրած տարբերակում, լրագրողների վերաբերյալ նշում առկա չէ: Հարցից և առաջադրված տարբերակներից բխում է, որ հարցը վերաբերել է ՀՀ

Created With Tiny Scanner

քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին:

Հարց 25

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 89-րդ հոդվածով, համաձայն որի գործին մասնակցող անձը փորձագետի եզրակացության վերաբերյալ գրավոր առարկությունը պարտավոր է առաջին ատյանի դատարան ներկայացնել մինչև նախնական դատական նիստի ավարտը, իսկ նախնական դատական նիստի ավարտը և դատաքննության սկսվելը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումներից բխում է, որ չեն կարող նույնանալ:

Հարց 29

Հավակնորդը նշված հարցի վերաբերյալ բողոքում կարողացել է հիմնավորել նաև իր ընտրած տարբերակի սխալ չլինելը, հետևաբար գնահատականն ենթակա է բարձրացման:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 8541 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակի: Քաղաքացիական դատավարության բաժնից ստացված 17 միավորը բարձրացնել 2 միավորով՝ արդյունքում արձանագրել 19 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ

Պ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Created With Tiny Scanner